

## ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 18-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՆԱՄԱԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԱՅԱՍՏԱԿՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՆԱՄԱԿԱՐԳԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԲՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2011թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Նարոյությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի հունիսի 18-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Շվեյցարիայի Նամադաշնության կառավարության միջեւ Նայասարանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 28.03.2011թ.:

Ուսումնասիրելով սույն գործով գեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՏՏ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ Ն. Մխիթարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Շվեյցարիայի Նամադաշնության կառավարության միջև Նայասրանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ տեխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010 թվականի հունիսի 18-ին Երեւանում՝ Նայասրանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության ծրագրի իրականացման նպատակով: Ծրագրի նպատակն է նպաստել աղետներին արձագանքելու բուժօգնության կարողությունների զարգացմանը՝ հիմնադրելով համապարփակ կարողություններով օժտված օպերատիվ արտակարգ բժշկական խմբեր:

2. Համաձայնագրով Նայասրանի Նանրապետությունն սրանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Նայասրանի կառավարությունը որպես համաձայնագրի կիրառման եւ Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմին նշանակի արտակարգ իրավիճակների նախարարությանը եւ առողջապահության նախարարությանը,

- ապահովել, որպեսզի արտակարգ իրավիճակների նախարարությունը եւ առողջապահության նախարարությունը Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարության Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության հետ համատեղ ստեղծեն ղեկավար կոմիտե, որը կուղղորդի եւ կվերահսկի Ծրագրի իրականացման աշխատանքները,

- ապահովել, որպեսզի ՏՏ կառավարությունը տրամադրի եւ վճարի առողջապահության նախարարության եւ արտակարգ իրավիճակների նախարարության՝ պահանջվող հայկական ամբողջ անձնակազմի աշխատավարձերը եւ ապահովի Ծրագրի շրջանակներում նրանց պարտավորությունների կատարումը,

ինչպես նաև ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ Ծրագրի իրականացումն ապահովելու համար,

- ապահովել, որպեսզի Շվեյցարական ներդրման միջոցներով ձեռք բերված բոլոր նյութերը Ծրագրի իրականացման ընթացքում օգտագործվեն բացառապես Ծրագրի նպատակների համար եւ այլն:

3. Համաձայնագրի 12-րդ, 13-րդ, 15-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ կողմերի համագործակցությունը խարսխված է ժողովրդավարության սկզբունքների եւ մարդու հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքի, կոռուպցիայի դեմ պայքարի եւ համաձայնագրի նպատակների հետեւողական իրականացման վրա: Կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ իրենց իրավունք են վերապահել, որ «հատուկ հրապրատություն» կառաջանա վերացնելու պայմանավորվածությունները, եթե կողմերից մեկը կոպիտ խախտում կատարի՝ համաձայնագրի 12-րդ հոդվածում նշված կարևոր դրույթների հետ կապված:

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին շվեյցարական կողմին ծանուցելու օրվանից:

5. Համաձայնագրում ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածին եւ բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման սահմանադրական սկզբունքից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության միջև Հայաստանում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համակարգին օժանդակության վերաբերյալ փոխնիկական եւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՆՈՂ**

**Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 ապրիլի 2011 թվականի  
ՍԴՈ-959